## 22. ԽԵԼՔՑ ԾԱԽՈՂ

Գյեղիմ մեջ էրկու ինգյեր կէլնին: Էտա մարթեր մեյմըկու շատ կուզին: Էն մեյ մարթու պյան-գետոծ ճա ծախ կէրթեր: Աման էն մեկէլին՝ աղեկ էր:

Էսա իտին մարթուն աստված տվեր էր: Օրե օր ուր մուշթարիքյ կշատնին, փարեն կավլներ. դյուքյան դնգզյան կճեռչսներ:

Օրին մեկ էն գեղից քանիմ ծանոթ պարեկամ մարթ էկան էսա մարթու մոտ:

Ասին. - Ա՛յ մարթ, մեյճ կտխսնանքյ, որ քյո պան-գյետոծն աղեկ ի, փարեն, վնստայտ տեղն ի, ընչի՞ չես փսայվե, էլնե տունտեղ:

- Չէ՛, - ասաց մարթն, - փարես քյիչ ի, մենայ խարսնսի մասաֆիր ջեռրեով խնի, ի՞նչխ փսայվեմ, սորա կմնամ գյլեոխ պնց:

- Հա՛յ տնաշեն, մարթ ըտսնն պնի խամա՞ր էլ կմտածի: Աստված կամաթ կխասուցի: Չես տե՞սնա, մեր գեղի ծոտ Կարապետ փսայվավ, ճա՛, ճա՛ տղեյներ գյեռ գյնխն ի խասնեն խոր յարդաղ: Աղորթ ի կասեն, չում խեյնցին փսայվի, ծոու տղեյներ կխասնեն: Ծոտ մ՚էլնե, արե մեր խոսք լսի: Տյու կնիկ առնես քյե զնրնր չի: Կնիկ քյե կլվա, քյե կթնփի, քո տուն-տեղաց, արտ-ափեն մույաթ կկենա: Կնիկ առնես, զարար չես անե: Մեկէլ չում ե՞փ աչկես: Ծնեյ, փսայվեյ, մեռնեյ մարթուս խամար պարտքմ ի:

Արին արին՝ չուր տղի խեյքյ լցիցին:

Տղեն ճեռչ խարսնիսմ պռնեց: Տյուր տրկցով, ազք պարեյմով. գյեռ գյեղայնով թնփնն էկան խարսնիս: Է գյեղի նդնթ, գյեղով Երուսաղեմ արին: Կերան, խման, զնրկին, խաղցին, էլնն կննցին: Հիչ չասին, թե խեղճ տղին չում վիզ մեյ պարտքի տակ մտուցին:

Խարսնիս էլնվ պրծավ, քյանիմ օր մնաց, մարթն ինքյն ուր ճաջիվ արաց, տեսավ որ ուր էլնծ, չէլնծ փսւրեն, դյուքյան, դնզգյնխ, որ խանի ծախս ջեռրեով պարտքից կնզատվի:

Հմեն պնն բարաբսրա արաց, իտուր ուր պսրտքճտերաց, մնաց ծեռ ծոց:

Օրմ ինոր ինգյեր էկավ ինոր մոտ, խարցուց, փնդռեց, տեսավ, որ էն էլ ուր ճնլին խասեր ի, ասաց. - Է՛, ինգյեր, մե էսա գյեղ խաց չկա, մեր բնխտ չպնի էսա տեղ, արե, էլնենքյ, էրթնքյ կուրբնթ, քանի ջաճեյ ենքյ, աշխատենքյ, բալքյի քյննիմ փնրի տեր էլնենքյ:

Փսայվուկ մարթն մտածեց, մտածեց, ուր խեյքյին ինգյավ, ճամոզվավ:

Էն մեկէլ օր կաց պնրեով արաց ուր թնզնն, քյանիմ շապթվա իրես կապած կնգյան, ջննթեն քիչմ խաց իտեր. գյնվազան ծեռ. Էլավ ինգյավ խետ ուր ինգրոչ ճամբախ:

Շատ կնացին. քիչ կննցին, շատ քիչ աստված կիտի. մեկ էլ խասան էն երկրի թակավորական քյաղաքյ: Քյաղաքյ ճեռչ. ժողովուրթ անհաշիվ, գործ-փնրն վաստկել էլն ըսկուն:

Մեյմկու ասին. - Ինգյե՛ր, մենքյ ըստեղ պաժվենքյ մեյմկուց. ամմա ուխտ էլնի ֆիլան տարուց ետ, ֆիլան օր, էլմ գյննքյ էսա տեղ, մեյմկու կնդնենքյ. խալւալ սրտով, ասենքյ մե մեյմկու վիճակ. որն որ խեղճ էլնվ. էն մեկէլ՝ ունենոր, ինոր ծեռ պռնի: Խա՞:

- Խա՛:

Մեյմկու իրես պաքյիցին, մնայհ պարի ասին, պւաժնվան: Մեյն կնաց ուր պնննին, մեկէլն՝ ուր պննին:

Կննցին էսա մարթեր զատ, զատ. մեյ մեյ մեկ պանեմ կպան: Աղեկ ավեր. գյնխմ զնրնր արին, գյնխմ՝ շահ, գյնխմ՝ պնն ունեցան, գյնխմ՝ չէ. լնվ մեյ խոսքով կուրբնթ էրթնցողի վիճակ կյանք. օրմ՝ աղեկ, օրմ՝ գյեշ:

Ընցավ վերեն տաս քսան տարի, ուրենց օր լմնցավ, էրկսի քյնմնր քյիսեն էլ լիքյ ոսկի, ուրենց միտն ինգյնվ ուրենց արած պայման, էրկուսն էլ էլնն էկան ուրենց խոսքյ տված տեղ:

- Պնրև քյե, ախպե՛ր:

- Աստծու պնրին:

Խասան ինգյան մեյմկու վզնով, պնքյիցին, լնցին, ծծղացին: Նստան քիչմ մեյմկու գյլխով էկածներ պատմիցին:

Վերճ՝ էն չփսայվողն ասաց փսայվողին. - Է՜, ախպե՛ր, եւ էրկու խարիր ոսկի ունեմ, տյու՞ ի՞նչ ունես:

- Ես էլ խարիր իսուն ունեմ:

- Է՜, փառք տիրոջ, էրկուսս էլ ունենքյ, մեյ մեկէլի մուննթի տակ չենքյ ինե: Դե՛, էլի ինենքյ ճնմբնխ, քյարվամ կէրթն էսօր, խետն էրթնք:

- Աղե՛կ, - կասի փսայվող մարթ, - ես փսակուկ մարթ եմ, իմ կնիկ էսա քսան տարի ի, իմ ճնմբնխ կաչկի, կուրբաթութնից կտառննմ, պնմ չտանե՞մ ինոր նվեր: Կայնի, ես էրթնմ շուկեն քիչմ պնն-մնն գնեմ, տանեմ խետս:

Մարթն էլնվ կննց շուկեն, ըստեխ ֆռաց, էն տեխ ֆռաց, տեսավ հմեն դյուքյնն մալ կա, դյուքնղարներ մնլ կծախեն, էն մեյտեղ մալ չկա, մենակ թնքյ մարթմ նստե էնտեղ:

Խելքյին փչեց. ինոր խամմար էլնվ մնռնխ, մտավ ներս: Ասաց. - Ախպե՛ր, էսա հմեն դյուքնղնրներ մնլ կծախեն, տյու ի՞նչ կծախես:

Մարթն ասաց. - Ես էլ խելք կծախեմ:

- Ի՞նչխ խելքյ կծախես:

- Խելք կծախեմ, խան խինգյ ոսկի տու, քյե խելքյմ ասեմ:

Մարթն ասաց. - Ջնհննմ, թող էն խինգյ ոսկին զի չէլնի:

Իխան խինգյ ոսկի, իտիր մարթու սեղնի վերեն:

Մարթն առեց ոսկին, ասաց. - Ամպ օր ճնմբնխ չէլնես:

Խեղճ գյեղական շիվարավ մնաց:

Ասաց. - Էտա՞ էր քյո խելքյ:

- Խա՛, - ասաց, - չխավնա՞ր, թե չխավնսւր շատ տու՝ աղեյն սովրցուցեմ:

Մարթն ինքյն ուր մտածեց ասաց. - Խինգյ ոսկին գյնա̈ց պամ չխասկցա. բարեմ խանեմ քյսան ոսկիմ Էլ տամ. բալքյի աղեյ պամ ասի:

Իխան քսյան ոսկի, իտիր էնտեղ:

Մարթ առեց, ասաց. - Քյնուկ գյախ արթուն կաց, մեկ Էլ ինչ որ կտիսնաս՝ ճամա շոտմ մի անե բեռլեռլեռ, ճվա-բոռա, քիչմ սբրի:

Մեր գյեղայնու խելքյին Էլմ պա̈ն չմնաց, ասաց. - Քյնուկ գյա̈խ ի՞նչխ արթուն մնամ: Էսա չէլա̈վ, քյանիմ ոսկի Էլ տամ, խեմ ի՞նչխ կէլնի:

Իխան մեկ իսուն ոսկիմ Էլ իտուր:

Մարթն առեց, ասաց. - Տան տիրոջ պա̈նին չխառնվես, մսաֆիր կէրթաս, տեղմ, տան տիրոջ ճիչ մեյ պանի վերեն չզրուցես: Մսաֆր ասած՝ տան տիրոջ եզն ի, դեռ ուզի դա կկապի:

- Հալլա՛ճ, ճալլա՛ճ, իսորից Էլ պամ չխասկցանքյ, - ասաց խեղճ գյեղական:

Տառցավ ջեռբ ծոց փնդռեց, մնացած քյանիմ ոսկին Էլ իլից վեր սեղնին:

Ասաց. - Տնաշենի մարթ, էսա մնաց, էս Էլ ա՛ռ, չում մկա ասածներացդ պամ չխասկցա, բարեմ մկա պամ ասա, որ մարթու խելքյին պառկի:

Խելքյ սովրցուցողն առեց փա̈րեն, ասաց. - Ի՞նչ որ կանես, քիչմ մտածի սորա արա:

Մարթն իսորիցն Էլ պա̈մ չխասկցավ, գյլեոխն իրար իտուր, իթող կնաց:

- Վա՛յ, վա՛յ, - ասաց ինքն ուր, - քսան տարի պա̈նա̈, պա̈նա̈ծս քսան թախկի մեջ խսւբրներ մնակ մնաց, ես ի՞նչխ էրթամ երկիր:

Ծեռ ծոց, վիզ ծուռ կնա̈ց ուր ինգյեր կնդավ:

Ինգյեր խարցուց. - Ուրե՞, առիր պա̈ն, մա̈ներդ, շոտ արա, քյա̈րվան կէրթա̈:

- Տյոկճ կնա̈ցեքյ, ես չեմ կանա գյա̈:

- Ընչի՞:

- Ըսկուն:

- Ընչի՞ ախր:

- Ի՞նչ ասեմ քյե, ախպեր, ըսկուն իշութեմ արի, որ իսկի ասել չէլնե:

- Ի՞նչ էլե, ասա, խենքյ:

Մարթն ուր գյլխու էկածն ինոր պատմեց:

- Է՛, զա̈րա̈ր չկա, - ասաց ինգյերն, - մենքյ ո՞ր ավուր խամար ախպեր էլեր ենքյ: Աճա իմ փա̈րից քյե խարիր ոսկիմ, էրթանքյ երկիր:

Մարթն շնորճակալ կէլնի կառնի, ամմա, կիրիշկա՝ էրկինք կտիսնա, որ ամպ ի: Կասի. - Ես չեմ իգյա̈, էն մարթուն խինգյ ոսկի տվի, ասաց՝ ամպ օր ճա̈մբա̈խ մ՚էլնե: Ես էսօր չեմ իգյա̈, տյուքյ կնա̈ցեքյ:

Ինգյերն խետ քա̈րվնին ճա̈մբա̈խ էլա̈վ կնա̈ց: Էնօր մեյ դիդա̈թլի անձրևմ կարկուտմ էկավ, որ իսկի մարթ չէր տիսե: Քյաղքյի գյետ շատացավ, շատ տներ քյակեց, տարավ խետ ծիյեր խեխտեց, մեյ խոսք՝ շատ զա̈րա̈ր իտուր:

Մարթն ինքն ուր ասաց. - Իմ փա̈րեն չթա̈լիցի ճյուր: Վալլա՛, շատ աղեկ արի չկնա̈ցի:

Էն մեկէլ օր էլա̈վ ինգյա̈վ ճա̈մբա̈խ, գնա̈ց, տեսավ մեյ դա̈շտի մեջ քյարվանն ուր մարթով խեխտվե: Թ՚ափվե վեր մեյմկու:

- Վա՛յ, փառք քեզ, աստված, - ասաց մարթն, - տյու զի ա̈զա̈տիցիր էսա փորձանքյից: Ծո խելքյ ծախող, խալալ էլնի քյո փա̈րեն: Էսա մեյ տիր պրծանքյ:

Կինն էսա էնա մեռածներաց. խեխտվածներաց ջեռը, ծոց կփնդռի. իսկի չէ մեյ խինգ․ խարիր, յոթ խարիր ոսկիմ կխանի տյուս:

- Շատ աղեկ. - կասի. - խինգյ ոսկի տվինքյ, խինգյ խարիր առինքյ:

Կմտածի, կէլնի կէրթա էլմ քյաղաքյ քիչմ ծի կգյնի. կառնի կուգյա խե քյանիմ քրաջու էտա մալեր կպառնա. ինքյ կէլնի մեյ ճեռչ բազրգանն. կէրթա խետ ուր ճըմխին:

Շատ կէրթը. քիչ կէրթը. կխասնի քյաղաքյմ, քյաղքյի տռան մոտ քյանիմ մարթեր իսոր ծիյու զմբյուլ կպռնեն:

Կասեն. - Աղա՛, ճրամեցիր. մեր խան գյեռ էսա մոտ տեղն ի. ուզած էօդեքյ, խզմաթքուր. ծիյանքյներաց խամար տաքյ փըգյախ. ի՞նչ որ ուզես ճըզր ի:

Մարթն ինքն ուր կասի. ճըլբըթ մեյ խանս պիտի էճնեմ. փարկ ի՞նչ. կէրթըմ իսոնց խան, խենքյ ինոնց ասածին պե՞սն ի:

Էրկու ադյում կթողեն քյաղքյի տռնից ներս, կխասնեն խան:

Մարթն ծիյուց տակ կուզի էժնել, խանչիքյ կխասնեն ծիյու զընգին կպռնեն: Ծին կքյըշեն փագախ: Մարթու քյուրքյն կառնեն տակ, կտանեն էօդեն: Սոքեն կվըռեն. չայ. կըճվա, խաց. կերակուր: Իրեքյ-իրեքյ մարթ ծեռ սրտին կայներ են իսոր դեմ:

Խանի մշայներն էլ ծիյեր, պեռներ կպիրեն ներս, կտեղավորեն:

Մարթն ինքն ուր կասի. - Վալլա՛, էսա տեղ լավ էր:

Քիչմ մնաց, խանչիքյ ասին. - Բազրգյա՛ն. զատ ճըմխու կուգյըս, էլի քյնի, խանգյստացի:

Մշայներն էկան տեղն իսկեցին. ուրենքյ էլան կնացին:

Ինքն էլավ պառկավ վեր տեղաց. որ քնի:

Մեկեն ուր միտքն ինգյըվ ուր քյսան ոսկանոց խելքյ, թե՝ քյնած գյըխ յիշար կաց. էն գյըխն էլ ինչ որ տիսնաս, շոտմ մի բոռա, մի ճվա: Էլըվ էսա մարթու սրտի մեջ մսոսախմ, աչկեր չկոցվի:

Ուր ըքեն քյըշեց վեր գյլխուն, պառկավ, ըքի թիվիցն էլ գյըխտիկ կիրիշկա:

Մեկէլ կտիսնա, ուր էօդի տյուռ կպացվի, չորս մարթ մտան ներս: Մեկ ծեր թուրմ, մեկին՝ նըջըխմ, մեկին՝ խընչըլմ, մեկին էլ՝ գյուռզ:

Մարթն ըխու կկտրի. ամա էլմ խելքյն կինի միտ, ծեն չխանե:

Կտիսնա, որ մարթեր շարված ուր կող պյուվեռ: Էն մեկ մզրղավորն ասաց. - Ախպերնե՛ր, էսա թուր որ զընեմ էսա մարթուն, ի՞նչխ կէլնի:

- Ինչխ կէլնի, մարթն կես տեղեն կկտրի, տապալմ՝ էն տեխ, տապալմ էն տեխ կթռնես:

- Խո կիտեքյ, որ կանամ անե:

- Խա՛, կանաս անե:

- Աման չեմ անե, - ասաց քյաշվավ էնդեխ:

Դեռո էկավ էն խանչալ ունեցողն ասաց. - Ախպերնե՛ր, որ էսա խանչալ զընեմ էսա մարթու սրտին, ի՞նչխ կէլնի:

- Ի՞նչխ կէլնի, քյամկից կուտա տյուս, ճալա պըմ էլ կմտնի խողի մեչ:

- Խո կիտեքյ, որ կանամ:

- Խա՛, կանաս անե:

- Աման չեմ անե:

Էսա տրիս էկավ նըջըխի տեր, ասաց. - Ախպերնե՛ր, էսա նըջըխ որ զընեմ իսոր գյլխուն, ի՞նչխ կէլնի:

- Ի՞նչխ կէլնի. գյլոխ սոխի պես կէլնի էրկու կտոր:

- Խո կիտեքյ. որ կանամ:

- Խա՛. կանաս:

- Աման չեմ անե:

Էն քաշվավ, էկավ գյուղի տեր:

Առաջին տաս կնդրմնոց գյուղ փոացուց վեր մարթու գյլխուն. ասաց. - Ախպերնե՛ր, որ էսա գյուղ զանեմ իսոր, ի՞նչխ կէլնի:

- Ի՞նչխ կէլնի. յոթ գյազ էլ գյետնի տակ կմտնի:

- Խո՞ գիտեքյ, որ կանամ:

- Խա՛, կանաս:

- Աման չեմ անե:

Մարթերն ասին ու քաշվան գնացին:

Մեր գյեղական ջեորեով նաֆաս առեց, խոգյին էկավ փոր. ասաց. - Փառքյ քյեզ. աստված, - ասաց, - նո՛ր ինգյա իմ մոր փոր, վայ մարթ. քյո աղբաթ խեր էլնի:

Տաոցավ էլավ ուշիկմ էօդի փենջարից իրիշկաց, տեսավ. որ էդա խանջիքյ պիրին ուր մալերաց մեչեն աղեկ ընտիր դանգյեր ճեոկեցին. տարան խճիցին մաղազեն, դուռ կոցեցին. ծյուն տվիցին դռան դեմ, իզ պնն ճմեն կուրիսցուցին, կնացին քյնան:

Ինքյն էլ էլավ դեորիս խանգյիստ քյնավ:

Առատուն արև առեց չառեց, խանջիքյ էլմ կայնուկ իսոր դռան վերեն, մեյն ըբրեղ, մեյն լնգյան, մեյն էլ մնճրնմեն պոներ են կայներ են:

Մ՛արթն էլավ վեր, լվացվավ, կնճվալթին արաց, ուր չայ-կնճվեն խմավ, ասաց. - Խանջի՛. ես էրթամ մեյ խատ էսա քյաղաքյ փռամ, ծեր շուկա-չարշին, տիսնամ, խենքյ կէլնի, որ պամ կէլնի առնել ծախելու:

- Տյու կիտես, աղա:

Մարթն էճավ չարշին. կնաց իսոր խարցուց. ինոր խարցուց, քյաղքյի կադու տեղ խասկցավ, կնաց ինոր մոտ. ինոր պատմեց ուր գյլխու էկած:

Կւադին առեց տաս-քսան խատ զաբթիյա, էկան խան պաշարեցին, մարթու նշանց տված տեղ փորել տվին, ծյուն տվին ետ, տեսան որ ինչ. չէ՞ թե մենակ էն գյեղայնու մալ, մեյ խարիր ըսկուն բազրգյնի մալ գյեր էնտեղ պախուկ:

Կւադին պոնեց էդա խանշիքյ, իխան կախարան: Մեր զյեղական ճեոչ նվեր. շատոմ էլ ապրանքյ թող զուր էլած, առեց կադուց. էլավ պնոցավ, ինգյավ ճամբախ:

Ծատ էկավ, քիչ էկավ, էկավ մեյ անվերվերի տաշտիմ մեչ թափեց ուր քարվան:

Էն տաշտի մեչն էլ քիչմ զատն մեյ խատ տունմ խորոտ, ճեոչ կոնախմ շինուկ էր:

Քիչ վերճ մեր գյեղական տեսավ, որ մեյ խատ ճեոչ տեխ, խորոտ մաքուր խալվներով մարթմ գյեռ կուգյա տեխ ուր:

- Պարև՛, քյե, ախպե՛ր:

- Աստծու պարին:

Նստան քիչմ զրյուցիցին:

Ճեոչ տեխ մարթն խարցուց. - Ո՞ր տեղացի ես:

- Ֆիլան գյեղիցն եմ:

Մեյ խոսքով պատմեց, թե ո՞ր տեղեն կուգյա, որտե՞ղ կէրթա. ի՞նչ պնի, ի՞նչ գեոոծի ի:

- Ոատ աղեկ. - ասաց մարթն:

- Աման պիտի կիտնաս. որ էսա սար-քար. էսա տար-տաշտ, էնա տուն ñմեն իմն են. իմ իշխանության տակն են, վո՞վ որ իմ խողից ընցնի, պիտի մտնի իմ կամքյի տակ:

Գյեղականն ասաց. - Ընչի չէ, մարթ որ թակավրու խողի մեջ որ էրթա, ինոր օրենքյ-կաննոնով պիսի նստի-կայնի:

- Հա՛, աղեկ որ կիտես. իմ օրենքյ-կանոնն էլ իսա ի, որ իմ խողից ընցնող մեկ կիշեր իմ տուն պիտի մսաֆր էլնի. ուտի, խմի, նոր՝ էլնի էրթա:

- Ընչի՞ չէ, կուգյամ. - ասաց մարթն:

Էլան, էրկուս մեյղրսւ գնացին իսոր տուն: Տան տուտ խասսան թե չէ, քյառսուն մարթ մեյ տուտ պսւցին. քյառսուն մարթ մեկէլ տուտ պնցին:

Մարթն ñիչ ծեն չի խան:

Կնացին մտան էտեն. տան տերն ասաց. - Էկե՛քյ. մեր մսաֆրի ջզմեքյ խանեքյ:

Քյառսուն մարթ մեյ. քյառսուն մարթ՝ մեկէլ ոտաց ջզմեքյ խանին:

- Մեր մսաֆրին կայլոն պերեքյ:

Քյառսուն մարթ կայլոն տվին, քյառսուն՝ սւտին:

Քիչ վերճ տան տերն ասաց. - Էլեքյ խաց պերեքյ, մեր մսաֆիր ճամխից կուգյն, անութա ի:

Էլան սուփրեն փռիցեն էն քյառսուն մարթ. էն մեկէլ քյառսուն մարթ մեյ մեյ մեկ նմուշ կերակուր պիրին. շարիցին սեղանի վերեն:

Գյեղական-բազրգյան կերավ կշտացավ:

Քյառսուն մարթ ըբրեղ իպե. քյառսուն մարթ լագյնն:

Մարթն լվնցվավ, էկավ նստավ տան տիրոջ տեմ, էլմ զրյուցեցին:

Կիշեր որ մթնեց, տան տերն ասաց. - Էլեքյ տեղն իսկեքյ, մեր մսաֆր թող քյնի:

Մարթեր տեղն իսկեցին. մսաֆր տան տիրոջ մոտեն ոտաց ճնմբնխ խարցուց: Քյառսուն մարթ իսոր տարան ճնմբնխ շանց տալու:

Մարթն ուր կննց, էտա տեղրանքյ ճամխի վերեն առաճ՝ տեսավ մէ ցորնի ամբարմ, մեջ քյառսուն խատ մեյ ոտնեն խավ: Ծեն չի խան: Ընցավ կնաց, տեսավ չինարի ծառի տակ մեյ չլուտ կնիկմ մեռլի չոր ուսկռներ արե թզբեխ. կախե ուր սրտից: Քյիչմէլ ընցավ, տեսավ մեյ տան մեչն էլ սնդա մարթու ջանղակ, մարթու գյլեոխ ի: Առանց ծեն խանելու ուր պետք խոգյաց. ետ տննցսւվ էկավ, նստավ ուր տեղ:

Տան տերն ասաց. - Մսաֆր, դէ՛, էլի քյնի, քյո տեղն իսկուկ ի: Քյե կիշեր պնրի:

Մարթն էլնվ պառկավ: Քյիչ վերջ մէ մշայն էկավ, ասաց. - Մսա՛ֆր, աղեն կասի՝ էլի վեր, մեյ դեռշակմ էլ թաղեմ քյո տակ:

Մարթն ñիչ ծեն չիխան, էլնվ վեր, դեռշայմ էլ թնլեցին ուր տակ, ենքյ պառկավ:

Քիչ վերջ մարթմ էլ էկավ ասաց. - Մսա՛ֆր, աղեն կասի՝ մեյ լխեֆ էլ քյաշի վեր ինոր:

Մեյ լխեֆ էլ քյաշեց վեր ինոր. կննց:

Չում լեոս. էսա մարթուն չթողին քյներ, քյառսուն մարթ ճեռկ-ճեռկ էկավ. մեյ-մեյ խատ դեռշակ իթնլ տակ, քյառսուն մարթ էկավ մեյ-մեյ խատ լխեֆ քյնշեց իսոր վերեն:

- Է՜, - կասեր էն մարթ ինքն ուր, - իսուն ոսկի եմ տվե: Խելքյ սովրցուցողն

ասաց՝ տան տիրոջ պանին չեն խառնվե. մեկ էլ՝ մսաֆր տան տիրոջ էշն ի. դեոր ուզի՝ դա կկապի: Ուր քյեֆ. ախր լեոս կպնցվի:

Առատուն լեոս պացվավ. մարթն էլավ վեր: Քյառսուն մշակ իբրեղ պռներ են, քյառսուն՝ լագյնն: Մարթն լվնցվավ. քյառսուն մարթ մննրնմեն կուտան, քյառսուն՝ կառնեն:

Մարթն կննց մսաֆրի էօղեն: Տան տեր էն տեղ նստուկ էր:

Ասաց. - Պնրև՛:

Ասաց. - Աստծու պարին:

- Կիշեր ի՞նչխ քյննր:

- Ծատ խանգյիստ:

Ուրենց խաց կերան, կաճվեն-չայ խման: Տան տերն վերուց ասաց. - Էյ մարթ, տյու էսա ի՞նչ տեսակ մարթ ես, ճեչ խարցումմ չես անե իմ էսա տան նիստ ու կացին, էսա մշակ-ծառին, էսա կեր ու խումին, տեսած-չտեսածին վերեն:

Մարթն ասաց. - Ի՞նչ խարցում անեմ:

- Ապա ինչի՞ իսկի չես ասե՝ էսա սնյսան մշակ ընչի՞ ես պռնե:

- Զի՞ ինչ. սայսան չէ, կուզես խարիր պռնի. իմ ի՞նչ գործն ի էտա պան:

- Է՜. իսկի չես ասե. էսա իմ կեր-խում. էսա մեյ մարթու խամար իմ արած ծախսն ի՞նչ էր:

- Զի ի՞նչ. ես մսաֆր եմ. կիշերմ կմնամ. մեյ պրտյուն խաց էլնի, ուտեմ. առատուն էլնեմ էրթամ, ընչի՞ խարցուցեմ. ընչի՞ փնդռեմ:

- Ապա էսա քյառսուն ծեռքյ յաթղին ի՞նչ կասես:

- Պնմ չէ. կիշեր քյնելու խամար ճմենին մեյ ծեռքյ յաթաղ կէլներ. զի քյառսուն ծեռքյ. էլ ի՞նչխ պետք խարց-փործ: Քյսան տարի կարիբ-կուրբնթ կան կուգյի, կակուղ յաթաղ չտիսե. էսա կիշեր խանգյիստ քյնա:

- Աղե՛կ, ապա էսա կնիկ՝ ի՞նչ կիշեր մեռլի ուսկռներաց շարան կախեր էր ուր սրտից:

- Մեյ մեռլի չէ՞. կուզի թո տաս մեռլի կախի, նն՛ կխարցուցեմ, նն՛ կփնդռեմ. ինոր պննին իկե՝ ընկուն ի արե:

- Է՜. - ասաց տան տեր, - տյու խելացի մարթմ ես. ես քյի պիտի իմ պատմութեն անեմ:

- Կուզես՝ արա. կուզես՝ մ՝անե՛. նն՛ կասեմ արա. նն՛ մ՝անե: Թե պատմես՝ կլսեմ. թե չէ՝ ճիչ:

Մարթն բնշլսյեց ուր պատմութեն:

Ասաց. - Էսա սար-քար, տար-տուշտ. չում քյսան. եոսուն ավուր ճննբնխ իմն ի: Իմ մալ-մլքին. իմ ոսկի-արծթին ճաշիվ չկա: Ուտելով չի խլսնե, ծախսելով չի վերճանա: Ես էսա տեղ, էսա ճեոչ տուն շինեցի: Ճննխորթ-մարթերուց խամար. որ ուտեն-խմեն. քյնեն, էլնեն էրթնն ուրենց պննին, առանց փնրն, առանց փող տալու: Տյու քյո պնրի աչկով խո տեսար. թե իմ մսաֆր խոգյնլուն ճիչ կուսուր չկեր:

Աման, չէլնվ մեյ մարթ. որ իմ արածին վերեն չզրյուցեր:

Մ'եյն ասաց՝ էսա կննդնր ծառա-մշակ ի՞նչ անեն. մեյն ասաց՝ էսա կննդնր կեր-կերսկուր ընչի՞ կիփես. մեյն ասաց՝ էսա քյո խավեր ընչի՞ մեյ ոտն են. մեյն ասաց՝ էնա ի՞նչ կնիկ ի. ուսկռի շարան վզից կախե:

Ծո. զավզագյ մարթեր. ծե՞ ինչ: Ինչ արիր եմ, զի խամար եմ արե. տյուք ընչի՞ կզրյուցեքյ:

Ընձւ շատազրոց մուրթերաց վիզ կտրեր եմ. թալեր եմ ուռաց ճամբախ. ինոնքյ որ տյու տեսար:

Մենակ էսա չի: Ես խավեր կառնեմ. կպիրեմ տուն. կթա̈լեմ մեջ ցորնի ամբրին: Տերամեռ քճճարարներ. ցորե՞ն կուզեքյ՝ կերեքյ, էլ քյճեճն ի՞նչ ի:

Ինոր խամար պիրիր եմ հմենի մեյ ոտ կնդրեր եմ, որ էլ քյճեճ չանեն:

Ուրիշ պամ ասեմ, իմ տան մեջ ուտելիքի-խմելիքի, յար-յաթղի հիչ մեյ պայսութեն չկա: Իմ տուն էճնող մարթերաց շատ շատեր լայեղ չեն անե իմ խացից ուտել: Կասեն՝ մեր չանթիկի մեջ կա: Կասեմ՝ թյություն ծխեքյ: Կասեն՝ մեր կութին թյություն կա: Կասեմ՝ տեղ թալեմ պառկի: Կասի՝ չէ, իմ յափունջեն, իմ քյուրքյ զի խերիքյ ի: Է՜, անխելքյ մարթ, որ էդա հմեն պան ունեքյ՝ էլ ընչի՞ էկաքյ մեր մոտ: Թող ծեր խացն ուտեքյ, ծեր թյություն քյաշեքյ, ծեր յափունջի մեջ էլ քյնեքյ:

Մենակ քյե տեսա էն մարթ. որ նա̈ իմ արածի-էլա̈ծին խարցուցիր-փնդռեցիր, նա̈ նազ-տուզ արիր իմ տված խաց-ճրին, քյե պես մսաֆր խա̈զա̈ր պա̈րեով գյա̈:

Հա՛ մնաց էնա կնգյան պատմութեն: Էն իմ երկրորդ կնիկն ի: Էն էլ ոռպների էր, ես էլ: Էն իրիկուն որ պիտի պառկենքյ մեյտեղ, տեսա որ մեյ խատ «ա՜խ»ըմ քյա̈շեց, խա̈րցուցի ա՜խ քյաշելու պատճառն: Ասաց՝ իմ ա̈ռճի իրիկ, մեյ խեղճ խովիվմ, ինգյավ իմ մեռ, ա՜խ քյա̈շեցի: Ինոր խամար ես էլ կնա̈ցի էտա խովվու ուսկոներ խանի, պիրի արի թզբեխ, կախիցի ինոր սրտից: Ասի՝ դե. հա՛ քյե խամար ա՜խ արա, խեմ էտա չոր ուսկոնից ի՞նչ կխասկնաս: Տյու որ իմ էսա մա̈լ-մլքյին աչք չունես, հա̈լա̈ քո սիրտ մեռածի իտևն ի, կնա̈ ինոր խետն էլ ապրի: Իմ պատմութեն վերճացավ, պարեկամ:

Ասաց էտա զա̈նգին մարթ: Էլա̈վ ուր էլա̈ծ-չէլա̈ծ ոսկուց-արծթից, մա̈լ-մյուլքյից մեյ խարիր պեռմ էլ ինքյ պառցավ իտու մեր գյեղացուն նվեր: Ասաց. - Դե՛, կնա̈, աստված խե քյե, քյե պես խուր պա̈րև, խա̈զա̈ր պա̈րեով գյա̈ իմ տուն:

Մեր գյեղական ուրախ-ուրախ էլա̈վ պառցավ ուր էլած-չէլած, փառք իտուր աստծուն, օղորմի էն խելքյ սովրցուցողեն, կնա̈ց խասավ չուր ուրենց գյեղ:

Խասավ ուրենց գյեղ, կնա̈ց վեր ուրենց տան տռան, տեսավ հեյ՝ ի՞նչ տուն, ի՞նչ պա̈ն: Տանտեղ քյեռշկ սարեմ կայներ ի, որ իրիշկաս վեր, փա̈սդ կինե տակ:

- Էսա չէլավ, - ասաց, - էսա մեր տան տեղ ուրիշ տուն ի շինուկ:

Էլա̈վ կնա̈ց տյուր-տրկցին խարցուց, փնդռեց, սա̈լա̈խ իտուր, թե՝ ֆլան տան տղեն, որ կնա̈ցեր ի կուրբւաթ, ինոր կնիկ, ինոր տուն գյեռ դեռ՞ր:

Գյեղական ինոր ասին, թե՝ էն քյո ասած մարթ շատ բեբախտ էկավ տյուս, տեյ ա̈լա̈ իրեքյ շա̈պթվան փեսա, կնիյն ի թող, էսա քյսան տարի ի, որ էլի կնա̈ցե: Խեղճ կնիկ, ուր էլած-չէլած, ուր տուն-տեղ ծախեց կերավ, մկա թողե կնա̈ցե գյեղից տյուս, մե խա̈րա̈բա̈ տամ մեջ կապրի:

Մարթն ծին քշեց, կնա̈ց էնտեղ: Փենջա̈րից իրիշկաց, ճրաքյ կեր տուն:

Տեսավ ուր կնիկ, ճանչցավ: Ամա տեսավ, որ կնիկ մե քյսան տարեկան խորոտ շհեյմ առե ուր ծոց պառկե:

- Հեյ գյիդի բեբախտ կնիկ, պեռզ կնիկ, յար էլ ես պռնե, - ասաց մարթն, ուր թիվեն թվանքն առեց տակ, որ պիտի զաներ: Ընկուն ինչ մեկմ ուր կողին ջխթեր, աներ. - Է՜, ի՞նչ կանես:

Ինքն ուր խելքյի էկավ ասաց. - Իմ քյրսփնքյ վաստկի իտեն փա̈րեն տվեր եմ իտեն խելքմ եմ սովրե. թե՝ ի՞նչ որ կանես՝ սոն մտածի: Կայնի խենքյ էսա տղեն վո՞վ ի:

Կմտնի ներս: Կէրթա կնգյնն գլխի վերեն կժլխի. կբոռա կնգյնն, կասի. - Կնի՛կ. կնի՛կ. էլի վեր:

Կնիկ աչկեր ճըմոթելեն կէլնի կնստի. քիչմ կուրոնի. սորա մեկեն կճանչնա:

- Ավա՛ր. ես մեռնեմ էտա քյո բնժին. մեռնեմ էտա քո ծեռաց. մա՛րթ. տյու դեռ՞ր իր:

Մարթն կշիվարի. չի կիտե ի՞նչ ասի:

- Կնի՛կ, ապա էտա՞ վո՛վ ի:

- Էն էլ քյո տղեն ի. վո՞վ ի: Քյասն տարի կնծցեր ես, օրմ չխարցուցիր. չփնդռիցիր: Քյասն տարի ումուտ-աստված, ումուտ էսա եմ արե, նստե քյո ճնմբնխն եմ աչկե:

Նոր մարթ կգյրկի ոտ տղեն, ուր կնիկ: Ծոտ կէլնի կէրթն գյեղի մեջ ռմենի խորոտ տուն կգյնի, ուր ապրանքներ պերի կծախի. կնստի վայելի ուր կնիկ-տղի խետ:

Աստծուց երեք խնձոր էճնվ: